ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
Կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 1225

ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-91/24 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ <<ԳԱՐԱՆՏ 24>> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար Ապարան համայնքի Նիգավան բնակավայրի աղբավայրի համար բարդի տեսակի ծառերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-91/24 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից <<ԳԱՐԱՆՏ 24>> ՍՊԸ-ի ներկայացրած էլեկտրոնային հայտում գնահատող հանձնաժողովի կողմից 22.10.2024թվականի հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Գնահատող հանձնաժողովը նույն օրը՝ 22.10.2024թվականին, էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/41-րդ կետի պահանջների շտկման ծանուցում է ուղղարկել <<ԳԱՐԱՆՏ 24>> ՍՊԸ-ին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: <<ԳԱՐԱՆՏ 24>> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փաստաթղթերի շտկումը չի կատարվել, ինչի արդյունքում 24.10.2024թվականի գնահատող հանձնաժողովի նիստում, հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/42-րդ կետի պահանջները, ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-91/24 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների 28.10.2024թ. զեկուցագիրը, հաշվի առնելով <<ԳԱՐԱՆՏ 24>> ՍՊԸ-ն համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա) պարբերության խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Որոշում եմ՝

1. Սկսել գործընթաց ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-91/24 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի մասնակից <<ԳԱՐԱՆՏ 24>> ՍՊԸ-ին(ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ք.Երևան,Նալբանդյան փող 25/14շ 76բն, էլ. հասցե creative.business1920@gmail.com) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Սույն որոշումը ենթակա է կատարման ստորագրման պահից:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանին:

Հարգանքներով՝

Ապարան համայնքի ղեկավար՝ **Կ.Մ.Եղիազարյան**

Կատարող՝ Ապարանի համայնքապետարանի
գնումների մասնագետ
Մարիամ Հայրապետյան
Հեռ.՝ +374 94-23-18-93